ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 05

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի

ռեկտորատի 24.10. 2020թ. նիստի

Ռեկտորատի նիստը կայացավ հեռահար կապի միջոցով

Հաղորդագրություններ են ուղարկել ռեկտորատի 16 (տասնվեց) անդամից 13-ը (տասներեք):

1. Ն. Ավետիսյան՝ ռեկտորի ԺՊ-ի ՊԿ
2. Գ. Նիկողոսյան՝ պրոռեկտոր-աշխատակազմի ղեկավարի ԺՊ
3. Կ. Պետրոսյան՝ ռեկտորատի քարտուղար, գիտական քարտուղար,
4. Ս. Շահպարոնյան՝ ռեկտորի օգնական
5. Հ. Մելքոնյան՝ արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի տնօրեն
6. Ա. Սարգսյան՝ գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն,
7. Ռ. Քալաջյան՝ ֆինանսատնտեսական վերլուծությունների, ծրագրավորման և հաշվապահական հաշվառման բաժնի վարիչ-գլխավոր հաշվապահ,
8. Թ.Խաչատրյան՝գրադարան - ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և SS կենտրոնի տնօրեն,
9. Ա. Մկրտչյան՝ ռազմական ամբիոնի պետ,
10. Բ. Պողոսյան՝բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկան,
11. Թ. Մելիքյան՝ հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի դեկան,
12. Ռ. Մարդոյան՝ մանկավարժության ֆակուլտետի դեկան
13. Օ. Հովհաննիսյան՝ սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի դեկան

ՕՐԱԿԱՐԳ

1. **Պայմանավորված ՀՀ-ում COVID-19-ի պատճառով դպրոցական աշնանային արձակուրդների տեղափոխմամբ և ռազմական դրությամբ՝ ՇՊՀ-ի ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի կողմից, մասնագիտական ամբիոնների հետ քննարկման արդյունքում, բակալավրի կրթական ծրագրով առկա և հեռակա ուսուցման համակարգի 2019-2020 ուստարվա երկրորդ կիսամյակի մանկավարժական պրակտիկայի իրականացման և գնահատման հետ կապված առաջարկության մասին**

2. **Ամփոփիչ ատեստավորման քննությանը չներկայացած կամ «անբավարար» գնահատական ստացած նախորդ տարվա շրջանավարտների մասին, ովքեր ցանկանում են այն վերահանձնել 2020-2021 ուսումնական տարվա շրջանավարտների հետ**

1. ԼՍԵՑԻՆ՝

   Պայմանավորված ՀՀ-ում COVID-19-ի պատճառով դպրոցական աշնանային արձակուրդների տեղափոխմամբ և ռազմական դրությամբ՝ ՇՊՀ-ի ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի կողմից, մասնագիտական ամբիոնների հետ քննարկման արդյունքում, բակալավրի կրթական ծրագրով առկա և հեռակա ուսուցման համակարգի 2019-2020 ուստարվա երկրորդ կիսամյակի մանկավարժական պրակտիկայի իրականացման և գնահատման հետ կապված առաջարկության մասին

   ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաստատել ՇՊՀ-ի ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի կողմից, մասնագիտական ամբիոնների հետ քննարկման արդյունքում, բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման համակարգի 2019-2020 ուստարվա երկրորդ կիսամյակի մանկավարժական պրակտիկայի իրականացման և գնահատման հետ կապված հետևյալ առաջարկությունը.

Մանկավարժական պրակտիկայի արդյունքների ամփոփումն իրականացնել ուսանողների կողմից դասերի օրինակելի պլանների (թվով 3 դասի) և դաստիարակչական աշխատանքի օրինակելի պլանի (թվով 1 աշխատանքի) ներկայացման միջոցով՝ արդյունքներն ամփոփելով մինչև ս.թ. հոկտեմբերի 28-ը: Մասնակի դեպքերում գնահատականների բողոքարկման կազմակերպումը թողնել մասնագիտական ամբիոնի հայեցողությանը:

2. Հաստատել ՇՊՀ-ի ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի կողմից, մասնագիտական ամբիոնների հետ քննարկման արդյունքում, բակալավրի

կրթական ծրագրով հեռակա ուսուցման համակարգի 2019-2020 ուստարվա երկրորդ կիսամյակի պրակտիկաների չլրացված օրերի փոխարեն դրանց իրականացման և գնահատման հետ կապված հետևյալ առաջարկությունը.

Պրակտիկաների արդյունքների ամփոփումն իրականացնել ուսանողների կողմից օրինակելի աշխատանքների պլանների վերլուծությամբ (թվով 3 դաս, դեպքի նկարագրություն, ցուցադրություն և այլն), արդյունքներն ամփոփելով մինչև ս.թ. նոյեմբերի 30-ը: Մասնակի դեպքերում գնահատականների բողոքարկման կազմակերպումը թողնել մասնագիտական ամբիոնի հայեցողությանը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

Կողմ՝13, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

2. ԼՍԵՑԻՆ՝

Ամփոփիչ ատեստավորման քննությանը չներկայացած կամ «անբավարար» գնահատական ստացած նախորդ տարվա շրջանավարտների մասին, ովքեր ցանկանում են այն վերահանձնել 2020-2021 ուսումնական տարվա շրջանավարտների հետ

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Նախորդ տարվա այն շրջանավարտները, ովքեր չեն ներկայացել ամփոփիչ ատեստավորման քննությանը, կամ ստացել են «անբավարար» գնահատական, թույլատրում է 2020-2021 ուսումնական տարվա շրջանավարտների հետ դրանք վերահանձնել՝ ս/թ նոյեմբերի 2-ից մինչև դեկտեմբերի 15-ը ընկած ժամանակահատվածում ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոն դիմում ներկայացնելու պարագայում:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

Կողմ՝13, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Ռեկտորի ԺՊ-ի ՊԿ՝	Ն. Ավետիսյան
Ռեկտորատի քարտուղար, գիտական քարտուղար՝	Կ. Պետրոսյան
Պրոռեկտոր-աշխատակազմի ղեկավարի ԺՊ	Գ. Նիկողոսյան
Ռեկտորի խորհրդական՝	Ս. Շահպարոնյան
Ֆինանսատնտեսական վերլուծությունների, ծրագրավորման և հաշվապահական հաշվ. բաժնի վարիչ-գլխավոր հաշվապահ՝	Ռ. Քալաջյան
Արհեստակցական կազմակերպության նախագահ՝	Վ. Խաչատրյան
Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն՝	Ա. Սարգսյան
Արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի տնօրեն՝	Հ. Մելքոնյան
Գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և SS կենտրոնի տնօրեն՝	Թ. Խաչատրյան

Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկանի — Բ. Պողոսյան

Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի դեկան՝ — Թ. Մելիքյան

Մանկավարժության ֆակուլտետի դեկան՝ — Ռ. Մարդոյան

Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի դեկան՝ — Օ. Հովհաննիսյան

Ռազմական ամբիոնի պետ՝ — Ա. Մկրտչյան

Անձն.կառ.և իրավ.ապահովման բաժնի պետ՝ — Ա. Հովհաննիսյան